կամծոյ, անտառք և մեղր շատ 'ի նոսա, 'ի հնումն կոչէր ՆԱԻՍԱՑ ԵՐԿԻՐ և ՏԱՄԲՈՒՐ, և ապա ՀԱՄԱՄԱՇԷՆ. բնակիչք նորա Հայք 'ի կէս անցելոյ դարուն դարձան յօրէնս Մահմետի, այլ ցարդ պահեն զանուանս և զսովորոյթս Հայոց: Գլխաւոր աւանն Համշէն որ և Պազար-Համշէն կայ 'ի ստորոտս Տէմիրթաղ լերին. առ որով և Խաչէթաղ լեառն (5), յորում մենաստան հին, ուր պահէին նշխարք Վարդանանց, և 'ի գագաթան նորին աւանդի պահիլ Վարշամակին Քրիստոսի, վասն որոյ և լեառնն Վարշամակ կոչեցաւ, և 'ի ռամկաց Վարթամաքէ: — Կիսաւուրբ 'ի հիւսիսոյ Համշինու կան մնացորդք Համշէն գալէսի բերդի, որ թերևս նոյն է հինն Տամբուր: Անուանի գեօղք Համշինու՝ Խէմաշ յատս խաչէքարայ. Մաբմանդ սակաւ ժամուք հեռի 'ի ծովէ. և առ եզերբ նորին Արթաշէն աւան հայանուն: — Պարխար լերինք անջրպետեն ընդ Համշէն յարևմուտս հիւսիսոյ և ընդ Կիւրճիստան յարևելս հարաւոյ. սա այսպէս կոչի վասն լինելոյ երբեմն ընդ ձեռամբ Վրաց. այլ յաճախագոյն ևս կոչի յանուն երկուց գլխաւոր աւանացն, որք են Բէրդագրակ և Կէօկէմ. սա յաջմէ կայ Ճորոխի մերձ 'ի սահմանս Թորթումայ. և մերձ նմին Արտուին, որ թուի գլխաւոր տեղի ԱՐՍԵԱՑՓՈՐ գաւառի Տայոց. իսկ Բերդագրակ յահեկէ գետոյն 'ի հիւսիսոյ Արսեաց. որոց մերձ է Օշտուն կամ Ոքնհաղ գիւղ, ուր մեծն Վահան եհար զզօրս Պարսից. Կարակալէն, Կարմիր հայաբնակ գեօղք, 'ի յետնումն բնակեն հռովմէական Հայք, վասն որոյ և Փութուն խէօյլ կոչի: Բազմութիւն հռովմէական Հայոցս բնակէ և յարևմտից Բերդագրակայ 'ի Խաչրէզուր կամ Խաչրաջուր վիճակի յեօթն կամ յութ գիւղից գումարելոյ, որք են Գէղամ, Կալմատ, Կէնօք, Կրման և Ճէճապաղ, Թուղլեննց, Խանդօզոր, Սէմենոց. յորս են 400 տունք և 2000 կամ աւելի ոգիք, իւրաքանչիւր եկեղեցեօք:

50. ԼԻՎԱՆԷ կամ ԱՐԴՈՒԻՆ վիճակ 'ի հիւսիսոյ Բերդագրակայ, ընդ մէջ Ճորոխայ և Պարխարայ, լեռնային այլ քաջաբեր երկիր և զուարճալի տեսլարանօք. քաղաքն ԱՐԴՈՒԻՆ կայ առ գետեզերբն յահեկէ 'ի զառիվայրի լերին. ունի ձեռագործս գունագոյն կտաւուց ներկելոց, և վաճառս փայտի և պտղոյ, զոր ընդ Ճորոխ առաքէ նաւուք 'ի Պոնտոս. 'ի բարձու լերինն կան կիսաւեր բերդն և մնացուածք գենուացի չինուածոց: Բնակիչք 7000, յորս 500 տուն հռովմէական Հայոց: Են Արդուինոյ իբրև 100 գեօղք, ընդ որս և աւանն Պարխար՝ համանուն լերանցն յորոց միջի կայ, և գետակին՝ որ խառնի 'ի Ճորոխ: — Պէճէնկէպ 'ի հարաւակողմն վիճակին, գեօղ մեծ առ գետեզերբն: Ի լերինս Պարխարայ կայ աւերակ մեծի և հռչակաւոր վանից և եկեղեցւոյ, այլ ոչ ուրուք ճանապարհորդի գիտնոյ քննեալ է զայն:

51. Յաջմէ Ճորոխայ 'ի հիւսիսոյ Կարնոյ գաւառի և այրարատեանն Բասենոյ կան վիճակքն ԹԱՎՈՒՍԿԵԱՐ, ՆԱՌԻՄԱՆ, ՕԼԹԻ, ՓԷՆԷԿ, 'ի հին գաւառս Տայոց, ընդ կուսակալութեամբ Էրզրումայ: Առաջինն կայ յաջակողմեան ափունս Ճորոխայ և ունի գեօղս 24, որոց գլխաւոր Թաշքալէ աւան, որ է հին Իշխանանիստ ազգին Տայոց: Իշխան գիւղ ունի հոյակապ տաճար նման Խախուայն և Էօշքայ (46) 'ի գեղնորակ կոփածոյ քարանց, 'Ն Թուականաւ Հայոց (951 Քրիստոսի): — ՆԱՌԻՄԱՆ 'ի հարաւոյ Թավուսկեարայ և յարևելից Թորթումայ ձգի. են նորա գեօղք 30. գլխաւորն Նարիման որ է Մամրվան ունի բերդ հին. նշանաւոր է և Իդ գիւղ մեծ 60 տամբք: — ՕԼԹԻ կայ 'ի հիւսիսոյ Նառիմանայ և յելից Թավուսկեարայ, մասն ՊԱՐՏԻԶԱՑՓՈՐ գաւառի Տայոց, որոյ և գետակ համանուն Պարտիզու ընթանայ ընդ այն, և Պարթէզ կամ Պարթըզ աւան մեծ 200 տամբք յեզր նորին. իսկ աւանն Օլթի է հին Քաղաք Ոխթեաց կամ ՈՒԽՏԻՔ, որոյ հին շինուածք բերդի կան ցայսօր, և կամուրջ նոր. բնակիչք 350 տուն: Վիճակին Օլթեայ են իբրև 60 գեօղք: — ՓԷՆԷԿ 'ի հիւսիսոյ Օլթեայ և յարևմտից Թաւուսկեարայ կայ 50 գիւղորայիւք. որոց գլխաւորք են Նէֆսի-Փէնէք և Փանաք կամ Փէնէքլէրտ. անուանիք 'ի Ժ դարու, 'ի հարըստութեան Վրաց. կայ մնոյ դաստակերտ մինոցս տաճար փոքր և բոլորշի, վայելուչ յոյժ և գեղեցիկ գըմբէթակապ, զոր արդ Տաճկաց 'ի մզկիթ փոխեալ է:

52. Ի հիւսիսոյ վիճակացն Տայոց և յաջմէ Ճորոխայ և Արդուինոյ կայ ԱՐՏԱՆՈՒՃ վիճակ 'ի ծայրս Գուգարաց, կամ Արտանուջ, ոռոգեալ համանուն գետով որ օժանդակէ զՃորոխ. են նորա իբրև 50 գեօղք, և պատշաճի հնոյ գաւառին ԿՂԱՐՋՔ, որ 'ի սահմանածայրս Հայոց, Վրաց և Եգերաց. գլխաւոր տեղին է ԱՐՏԱՆՈՒՃ քաղաք առ գետեզերբն 'ի հարաւոյ, 'ի զառ 'ի կող լեռնակի, պարսպեալ քարաժեռիւք և որմովք. են 'ի նմա աւերակք վաղեմի շինուածոց, մեծի բերդի և եկեղեցեաց. 'ի միջնաբերդին են իբրու 120 տունք: — Յելից հարաւոյ քաղաքին կայ Քիւրճէպի աւան, բնավայր Կղարջաց գաւառի: Մինչև յայս սահմանս աւանդեն պատմիչք Վրաց յառաջեալ Անդրէի առաքելոյ քարոզութեամբ աւետարանին: — Ի հիւսիսոյ Արտանուշոյ կայ ՇԱՒՇԷԹ վիճակ, և 'ի նորա հիւսիսոյ արևմտից ԻՄԷՐԽԵՎԻ (Իմերայ-Ձոր), սահմանակիցք Աճարայ, այն ինքն է Եգերք: Ի Շաւշէթ՝ գլխաւոր աւան է Սաթլէլի. և առ ջրով Շաւշէթի Թախար հին բերդ: — Յելից վիճակացս առ սահմանակցութեամբ Ռուսացն Հայաստանի՝ ԲՈՑՂՈՎ և ԷՐՈՒՇԷԹ վիճակք. առաջնոյն գլխաւոր աւան է Տիւլէր, ուր նստի պէկ. միահամուռ գեօղք աւելի քան զհարիւր են վիճակացն. սփռեալք 'ի լեռնադաշտակս հնոց գաւառացն Ջաւախաց և Արտահանայ որ յաշխարհին Գուգարաց:

53. Ի հարաւոյ սոցա կայ մեծ վիճակն ԱՐՏԱՀԱՆ զհամանուն գետովն տարածեալ, որ է ինքն ակիզբն Կուրայ. յարևմտից ունելով զՇաւշէթ և զԿղարջս որ է Արտանուշ, և յարևելից զԱխալցխէ գաւառ ռուսական մասին: ԱՐՏԱՀԱՆ քաղաք 'ի ձախմէ գետոյն կայ 'ի բարձրաւանդակի 'ի քարուտ վայրի, որոյ պարիսպք աւերեցան 'ի Ռուսաց յամին 1828. են արդ 'ի նմա տունք 100, և բնակարանքն փորեալ են 'ի լերինն. յորոյ գագաթան կայ ամրոցն: Գեօղք իբրև 100 են վիճակին Արտահանայ. յորս երևելի է Շապաւան կամ Շապէան, յորում նստի պէկ: Գտանին աւերակ և ամայի բերդորայք 'ի լերինս, երբեմն կա-